# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<03>> հուլիսի 2025թ.    N ՄՊ/633 -Ա

ք. Արմավիր

### «ԳԵՏԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԵՎՈՐԳ ՄՈՒՔՈՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Գևորգ Մուքոյանի 2025 թվականի հունիսի 30-ի դիմումը.

ո ր ո շ ու մ   ե մ՝

1. «Գետաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գևորգ Մուքոյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդ՝ 2025 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 15-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գևորգ Մուքոյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Գետաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Գետաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ալինա Հովհաննիսյանին:
3. «Գետաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ալինա Հովհաննիսյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 15-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Գևորգ Մուքոյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 18-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝    Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

2025-07-03 ... Հայաստանի ... 